ԿԱՐԾԻՔ

Ա.Վ. Ավետիսյանի «10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը քրոսֆիթի տարրերի կիրառմամբ» ԺԳ.00.02- դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկան կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Ա.Վ. Ավետիսյանի գրախոսվող գիտական աշխատանքը նվիրված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կարևոր և արդիական հիմնախնդիրներից մեկին՝ 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստման կատարելագործմանը: Հեղինակն ընտրել է այս հիմնախնդրի լուծման ոչ բավարար ուսումնասիրված ուղղությունը - այն է, քրոսֆիթի տարրերի կիրառումը, որն ուղղված է ձյուդոիստների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Պատանի ձյուդոիստների պատրաստվածության այլ մեթոդների հետ համատեղ քրոսֆիթի տարրերի կիրառումը ներկայացնում է մեծ հնարավորություններ այդ սպորտսմենների ֆիզիկական պատրաստվածության կատարելագործման համար:

Վերոշարադրյալը հենց ներկայացնում է հետազոտվող հիմնախնդրի արդիականությունը, նրա տեսական և գործնական նշանակությունը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքը շարադրված է 160 համակարգչային տեքստերի էջերի քանակից, բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Հետազոտության գիտական նորույթը որոշվում է 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստվածության կատարելագործման քրոսֆիթի տարրերի ընտրությամբ, մշակմամբ, համակարգմամբ, ինչպես նաև այդ սպորտսմենների մարզումների գործընթացի վրա դրանց դրական ազդեցությամբ և արդյունավետությամբ:

Կարելի է արձանագրել, որ 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործման մեջ քրոսֆիթի տարրերի

կիրառմամբ տեսական գիտելիքների և պատկերացումների ընդլայնումն ու խորացումը, մշակված մոտեցումների արդյունավետության տեսական հիմնավորումը և հետազոտությամբ ստացված արդյունքները ընդհանուր առմամբ որոշում են Ա.Վ. Ավետիսյանի կողմից անցկացված հետազոտության տեսական նշանակությունը:

Գրախոսվող ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստվածության քրոսֆիթի տարրի կիրառման վրա հիմնավորված նորարարական ծրագրի մշակման, համակարգման և ներդրման մեջ:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը ապահովված է ինչպես անցկացված աշխատանքի մասշտաբով, փորձարկվող քանակակազմի ընդգրկմամբ, այնպես էլ դրված խնդիրներին համապատասխան արդիական մեթոդների կիրառմամբ:

Տեսական և գործնական դրույթների հավաստիությունը հիմնավորվում է նաև հեղինակի թվով 9 հրապարակումներով, ելույթներով և հետազոտության արդյունքների քննարկումներով:

Գրախոսվող աշխատանքի վերլուծությունը վկայում է, որ հայցորդը ընդունակ է որոշել և լուծել արդիական և կարևոր գիտական խնդիրներ, խորը և բազմակողմանի ուսումնասիրել և պատշաճ գիտական մակարկով բնութագրել հետազոտության ստացված արդյունքները:

Ա.Վ.Ավետիսյանի կողմից կատարված հետազոտությունների արդյունքում ստացված էական արդյունքներին կարելի է վերագրել հետևյալը.

1. Հետազոտվող հիմնախնդրի տեսական ասպեկտների բազմակազմանի և խորը ուսումնասիրություն և ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության զարգացման ժամանակակից մոտեցումների ընդհանրացում:
2. 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության նորարարական ծրագրի մշակումը, որը հիմնված է քրոսֆիթի տարրերի լայն կիրառման վրա:
3. 3.Քրոսֆիթով պարապմունքների դրական ներգործության ստացված և համակարգված արդյունքների ազդեցությունը մարզչական գործընթացի

արդյունավետության բարձրացման և 10-12 տարեկան ձյուդոիստների մրցակցական արդյունքների բարելավման վրա:

4. 10-12 տարեկան ձյուդոիստների մարզիչների համար գործնական հանձնարարականների մշակում/ թրոսֆիթի տարրերի կիրառման դեպքում:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով գրախոսվող ատենախոսական աշխատանքը, կցանկանայինք նշել նրա առանձին թերությունները.

1. Ցանկալի կլիներ, որ 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության թրոսֆիթի տարրերի կիրառմամբ նորարարական ծրագիրը ատենախոսության մեջ ներկայացված լիներ ավելի մանրամասն:

2. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ատենախոսության մեջ ընդգրկեր հավելված, որում կներկայացվեր 10-12 տարեկան ձյուդոիստների թրոսֆիթի տարրերի կիրառմամբ ֆիզիկական պատրաստության կատարելագործման և զարգացման հատուկ մեթոդիկան և մոտեցումները:

3.Ատենախոսության մեջ ներկայացված որոշ աղյուսակներում և տրամագիրներում կան անճշտություններ.

- հետևյալ աղյուսակներում 5 (էջ95), 7 (էջ 102), 8 (էջ 109-110), 9 (էջ 113), 10(էջ120), 13 (էջ123) ներկայացված են փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները, բայց չի նշված հետազոտվողների քանակը
- հետևյալ տրամագրերում 11 (էջ97), 15 (էջ114), 16 (էջ115), 17,18 (էջ 116), 19 (էջ 117),

20 (էջ 122), ձախ կողմից ներկայացված են թվեր, բայց վերևում չի նշված թե դրանք ինչ տվյալներ են:

4. Ատենախոսը աշխատանքում ներկայացրել է 168 գրական աղբյուր, որոնցից 10 (5.9%) է վերջին 5 տարվա:

Դրա հետ մեկտեղ գրականության ցանկը կազմելիս թույլ է տվել որոշ անճշտություններ.

- հեղինակները չեն ներկայացված առանձին հայերեն, ռուսերեն և արտասահմանյան լեզուներով:
- հեղինակները և աշխատանքները չեն ներկայացված այբբենական կարգով, ներկայացված են խառը, քաոսային:

• Գրականության ցանկում նշված են հեղինակներ (NN 27, 57, 60, 72, 77, 80, 152, 154, 155, 167, 168 և այլն), իսկ ատենախոսության տեքստում դրանք բացակայում են:

5. Աշխատանքում առկա են սառանձին ուղղագրական սխալներ և անճշտություններ:

Մեր կողմից կատարված դիտողությունները չեն իջեցնում Ա.Վ. Ավետիսյանի կատարած ատենախոսական աշխատանքի արժեքը, որը հանդիսանում է ավարտական հետազոտության, դրանում իրականացված է կարևոր գիտական հիմնախնդրի լուծումը և տեսական ընդհանրացումը, այն է, 10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության՝ իրոսֆիթի տարրերի կիրառմամբ նորարարական ծրագրի մշակումը, որն ունի տեսական և գործնական մեծ նշանակություն ձյուդոիստների սպորտային մարզումների համար:

Ատենախոսության սեղմագիրը և գիտական հրապարակումները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերը շարադրյալը թույլ է տալիս կատարել հետևյալ ընդհանուր եզրակացության:

Եզրակացություն

Հետազոտության թեմայի արդիականությունը, դրա նորույթը, տեսական և գործնական կարևորությունը, ինչպես նաև հետազոտությամբ ստացված արդյունքների և եզրակացության հավատարիությունը և հիմնավորվածությունը հիմք են տալիս համարել, որ Արման Վաչագանի Ավետիսյանի «10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը իրոսֆիթի տարրերի կիրառմամբ» հանդիսանում է ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, որոնք ներկայացված են ատենախոսությունների հանդեպ մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի թեկնածուի մրցույթի՝ ըստ ԺԳ.00.02 մասնագիտության «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա և սպորտ), իսկ հայցորդը լիովին արժանի է պահանջվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՄ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, մանկ. գիտությունների դոկտոր, սպորտային մարմնամարզության ԽՍՀՄ սպորտի վարպետ /Ռ.Ն. Ազարյան/

Պրոֆեսոր Ռ.Ն. Ազարյանի ստորագրությունը հաստատում եմ,
Խ. Աբովյանի ՀՊՄՀ գիտական քարտուղար /Մ.Մ. Իսպիրյան/

12.01.2024թ.